

2/26.9/651



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0032-21

Ձեռնարկողը՝

«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ

ք. Երևան, Շիրակի 74/19

**Գործունեությունը՝ Կարմիրսարի կրաքարային մերգելների հանքավայրի
շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
հաշվեկարգություն
Արարատի մարզ**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0032-21
<15> 02 2021թ.

**Արարատի մարզի
Կարմիրսարի կրաքարային մերգելների հանքավայրի
արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն**

Ներածական մաս.

Ձեռնարկող՝

«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/
«Ա» կատեգորիա

Տեղադրման վայրը՝

Արարատի մարզ, Այգեգարդ համայնք

«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ Ընկերության կողմից /այսուհետ՝ Ընկերություն/
նախատեսվող Արարատի մարզի Կարմիրսարի կրաքարային մերգելների
հանքավայրի արդյունահանման նախագիծը մշակված է Ընկերությանը
տրամադրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և
փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի, 4-րդ
մասի, 2-րդ կետի գ. ենթակետի՝ Արարատի մարզի Կարմիրսարի կրաքարային
մերգելների հանքավայրի արդյունահանումը դասակարգվում է «Ա» կատեգորիայի
գործունեության տեսակների ցանկում:

Նկարագրական մաս

Կարմիրսարի կրաքարային մերգելների հանքավայրը գտնվում է Արարատի
մարզում՝ Վեդի քաղաքից 15կմ հյուսիս-արևմուտք: Մոտակա բնակավայրերն են՝
Այգեգարդ (մոտ 5.3կմ), Գինեվետ (մոտ 4կմ), Քաղցրաշեն (մոտ 4.5կմ), Նոր Ուղի
գյուղերը (մոտ 3.8կմ):

Նախագծվող հանքավայրի (34.11հա) սահմաններում օգտակար հանածոյի
հաշվեկշռային պաշարներն ըստ B+C1 կարգերով կազմում է 27 867 900մ³:

Սույն նախագծով նախատեսվում է հանքավայրը շահագործել բաց
եղանակով՝ տարեկան 557358մ³ արտադրողականությամբ մարվող պաշար:
Արդյունահանվող պաշարների քանակը կազմում է 21 659 500մ³:



Տարեկան արդյունահանվելու է 433190մ³ ծավալով կրաքարային մերգել: Արդյունահանված օգտակար հանածոն տեղափոխվելու է 60կմ հեռավորության վրա գտնվող վերամշակման արտադրամաս /գործարան/՝ հետագա վերամշակման, իսկ մակաբացման ապարները, միջինը 1.2կմ հեռավորությամբ՝ ներքին լցակույտ:

Հանույթային աշխատանքները կատարվելու են էքսկավատոր-ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրով:

Բացահանքի աշխատանքների կազմակերպման համար հանքավայրում կառուցվելու է արտադրական հրապարակ՝ իր անհրաժեշտ կառույցներով:

Շահագործման ավարտից հետո կատարվելու է հանքավայրի ռեկուլտիվացիա:

Նշված պայմաններով կառուցված բացահանքն ունի հետևյալ պարամետրերը.

- ամենամեծ երկարությունը՝ 952մ,
- ամենամեծ լայնությունը՝ 430մ,
- բացահանքի մշակման ամենամեծ խորությունը մինչև 1125մ բարձրության, հորիզոնը՝ 112.1մ,
- մակաբացման ապարների միջին հզորությունը՝ 0.16մ,
- օգտակար հանածոյի միջին հզորությունը՝ 81.7մ,
- մակաբացման ապարների (տարածված է տրամադրվող տարածքի հարավ արևելյան մասում՝ 4.2հա տարածքում) քանակը՝ 55 800մ³:
- Օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ 27867.9հազ.մ³, կամ 65210886տ:
- Օգտակար հանածոյի արդյունահանվող պաշարների քանակը՝ 21659.5հազ.մ³, կամ 50683230տ:

Բացահանքի զբաղեցրած տարածքն է 34.11հա, իսկ ներքին լցակույտինը՝ 8700մ²:

Բացահանքի ծառայման ժամկետը նախատեսված է 50 տարի:

Հանքավայրից հայցվող տարածքը բնութագրվում է հետևյալ կոողինատներով.

- | | | |
|---------------------|---------------------|---------------------|
| 1. 8469874, 4423703 | 4. 8470200, 4424697 | 7. 8470168, 4424150 |
| 2. 8469608, 4424041 | 5. 8470381, 4424578 | 8. 8469968, 4424016 |
| 3. 8470012, 4424586 | 6. 8470335, 4424274 | 9. 8469916, 4423786 |

Բուն տեղամասի տարածքը զուրկ է հողաբուսական շերտից, օգտակար հանածո հանդիսացող կրաքարային մերգելները ամբողջապես մերկացված են, տարածքը իրենից ներկայացնում է մայրական կրաքարա-կարբոնատային կազմի տերիգեն առաջացումներով կազմված քարքարոտ մակերես:

Ներկայացված նախագծով հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանների համաձայն, հանքավայրի տարածքում գետնաջրերը բացակայում են, հետևաբար բացահանքում ջրհեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում: Անմիջապես բացահանքի տարածք թափվող մթնոլորտային տեղումներից գոյացած ջրերը հեռացվում են ինքնահոս կերպով և զանգվածի բնական ճեղքերի ցանցի միջով ներծծվում են խորքերը:

Աշխատանքները կատարվելու են էքսկավատոր-ավտոինքնաթափ-բուլդոզեր լեռնատրանսպորտային համալիրով:



Հանքավայրի շահագործման ընթացքում մթնոլորտ արտանետվող վնասակար գազերի և փոշու աղբյուր են հանդիսանում բացահանքը, տեխնիկական և տրանսպորտային միջոցներն ու լցակույտերը:

Օդային ավազան արտանետվող վնասակար նյութերն են՝ անօրգանական փոշին, ազոտի երկօքսիդը, ածխածնի օքսիդը (CO), մուրը: Հաշվետվությունում հաշվարկվել են արտանետումների գումարային քանակները, որոնց մերձգետնյա կոնցենտրացիաների արժեքները գտնվում են թույլարտելի նորմերի սահմաններում: Վնասակար նյութերի արտանետումները կապված են բացահանքում աշխատող մեքենաների և սարքավորումների շարժիչների տարբեր տեսակի վառելիքի ծախսերի հետ:

Բացահանքի շահագործման ընթացքում կառաջանան բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ /մեխանիզմներում փոխվող օգտագործված յուղերը և քսայուղերը, մաշված դետալների և մասերի նորով փոխարինման ժամանակ առաջացած մետաղական թափոնները /մետաղաջարդոնները և կենցաղային աղբը: Օգտագործված յուղերը և քսայուղերը հավաքվելու են առանձին տարաների մեջ և հանձնվելու են յուղերի և քսայուղերի երկրորդական վերամշակման կետին:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվելու է երկու նպատակով.

- աշխատողներին խմելու ջրով ապահովելու,
- աշխատանքային հրապարակների, մուտքային ճանապարհների ու լցակույտերի ջրցանի համար:

Հանքավայրի համար տեխնիկական ջրամատակարարումն իրականացվելու է KO-002 (ZIL-431412) մակնիշի ջրցան-վացող ավտոմեքենայով, իսկ խմելու ջուրը բերվելու է ՍԽ-ԵԼԸԵ -1.4 ջրի ցիստեռնով:

Բացահանքում լեռնային աշխատանքները նախատեսվում է կատարել շուրջտարյա աշխատանքային ռեժիմով: Աշխատանքային օրերի քանակը՝ 260 օր/տարի, օրական մեկ 8-ժամյա աշխատանքային հերթափոխով:

Հանքավայրի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են՝ ավտոտրանսպորտը և սարքավորումները:

Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնումներն իրականացվելու են բացահանքի շահագործման ավարտից հետո:

Շահագործման ավարտից հետո N1 ներքին լցակույտի մակաբացման ապարները բուլդոզերով կտարածվի բացահանքի հատակի ողջ 110300մ² մակերեսով և h=0.55մ բարձրությամբ կհարթեցվի:

Կհարթեցվի նաև արդյունաբերական հրապարակը՝ 370մ² և ավտոճանապարհները՝ 10800մ² մակերեսով: Հարթեցման ընդհանուր մակերեսը կկազմի՝ 121470մ²: Հարթեցումը կկատարվի բուլդոզերի օգնությամբ: Մշակված տարածության լեռնատեխնիկական վերականգնման ընդհանուր մակերեսը կազմում է 12.147հա: Ռեկուլտիվացման աշխատանքների համար նախատեսված գումարի չափը կազմում է 1738.1հազ.դրամ:

Հանքավայրում բացակայում է հումուսով հարուստ հողային շերտը, ինչի պատճառով այն պիտանի չէ գյուղատնտեսական աշխատանքների իրականացման համար:

Ըստ նախագծի հանքավայրի տարածքը պահպանվող տարածք չէ:

Գործունեության ենթակա տարածքում չեն դիտարկվել Կարմիր գրքերում գրանցված և պահպանվող բույսերի և կենդանիների աճելավայրեր/ապրելավայրեր:



Փորձաքննական պահանջներ

1. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել 22.02. 2018թ. N191-Ն որոշման պահանջներով և շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
2. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը՝ ըստ ժամանակացույցի:
3. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել արտանետվող փոշու, առաջացող աղմուկի, թթոռումների թույլատրելի մակարդակները ու արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:
4. Անհրաժեշտ է պահպանել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման 43-րդ կետը. «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Արարատի մարզի Կարմիրսարի կրաքարային մերգելների հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝



Մ. Ավետիսյան